# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Թումանյան համայնք, Կենտրոնական փողոց 1,
հեռ. 098-04-80-46

Թիվ 03 -62
<<18>> մարտի 2013թ.

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝
ՊԱՐՈՆ Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Կից ներկայացնում ենք Թումանյան համայնքի ավագանու թիվ 7-Ն, 8-9 Ա և քաղաքապետի թիվ 9-Ն որոշումները: 5 թերթ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ՋԱՎԱՐՅԱՆ

<<ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Թումանյան համայնք, Կենտրոնական փողոց 1,
հեռ. 098-04-80-46


## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«13 » մարտի 2013 թվականի N7-Ն

## ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013Թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 16 հոդվածի առաջին մասի 3-րդ կետի և <<ՀՀ բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 32 հոդվածի՝ համայնքի ավագանին որոշում է.

Թումանյան համայնքի 2013թ. բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1.Վարչական մասի եկամուտներում.
1)Ավելացնել համայնքի վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների գույքահարկը՝ 55.3 հազար դրամով, սահմանել այն՝ 293.7 հազար դրամ:
2)Ավելցանել փոխադրամիջոցների համար նախատեսված գույքահարկը՝ 16.3 հազար դրամով, սահմանել այն՝ 1456.3 հազար դրամ:
3)Պակասեցնել պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիան՝ 1.8 հազար դրամով, սահմանել այն՝ 25267.5 հազար դրամ:
4) Ավելացնել տեղական վճարները՝ 1.8 հազար դրամով, սահմանել այն՝ 1322.9 հազար դրամ:

2.Վարչական մասի ծախսերում.
1)Պակասեցնել պահուստային ֆոնդը՝ 500.0 հազար դրամով, սահմանել այն՝ 1.0մլն դրամ:
2)Ավելացնել <<Կառավարման ապարատի>> ծախսերի նախահաշվի <<Համակարգչային ծառայության>> համար նախատեսված ծախսերը (հոդված 4232)՝ 40.0 հազ. դրամով, սահմանել այն՝ 90.0 հազար դրամ:
3)Ավելացնել <<Կառավարման ապարատի>> ծախսերի նախահաշվի <<Տեղեկատվական ծառայության>> համար նախատեսված ծախսերը (հոդված 4234)՝ 31.6 հազար դրամով, սահմանել այն՝ 161.6 հազար դրամ:
4)Ավելացնել <<Փողոցների լուսավորման>> <<Էներգետիկ ծառայությունների>> համար նախատեսված ծախսերը (հոդված 4212)՝ 500.0 հազար դրամով, սահմանել այն՝ 820.0 հազար դրամ:
5) Պակասեցնել <<Շրջակա միջավայրի պաշտպանության>> Պարտադիր վճարները (հոդված 4823)՝ 20.0 հազար դրամով:
6) Պակասեցնել <<Շրջակա միջավայրի պաշտպանության>> Այլ հարկերը (հոդված 4822)՝ 4.0 հազար դրամով:
7)Ավելացնել <<Շրջակա միջավայրի պաշտպանության>> Տրանսպորտային նյութերը (հոդված 4264)՝ 24.0 հազար դրամով:

3.Ֆոնդային մասի ծախսերում

1)Նախատեսել <<Փողոցների լուսավորման>> համար <<Շենքերի և շինությունների կառուցման>> ծախսեր (հոդ. 5112)՝ 534.6 հազար դրամ, սահմանել այն՝ 534.6 հազար դրամ:

2)Համայնքի 2012 թ-ի վարչական մասի միջոցների տարեվերջի հավելուրդը՝ 432.9 հազար դրամը ուղղել 2013թ-ի ֆոնդային մասի ծախսերին:

Կողմ(6) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ՄԻՍԱՔ ԱՂԱՄՅԱՆ

ՆԵՐՍԵՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

ՍԵՅՐԱՆ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

ՄԱՐԱՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՄԱՐՏՈՒՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ՌԱՄԱԶՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ՋԱՎԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

ՀՀ Լոռու մարզի ք.Թումանյան
Կենտրոնական փողոց N1
Հեռ.098-04-80-46

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«13»մարտի 2013 թվականի թիվ 8 -Ա

## ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Թումանյանի քաղաքային համայնքի ավագանու.2012թ.դեկտեմբերի 17-ի < Թումանյան համայնքի 2013թ. բյուջեն հաստատելու մասին > թիվ 43-Ն որոշումը և Թումանյան քաղաքի բնակիչներ Ռոբերտ Ռուշանի Մելքումյանի ,Սեդա Նիկալի Մադոյանի և Արմենակ Հայկազի Զաքարյանի դիմումները.

1. Թումանյանի քաղաքապետարանի սոցիալական օգնություն խմբի այլ նպաստներ բյուջեից /հոդված 4729 / Թումանյան քաղաքի ստորև բերված անապահով քաղաքացիներին տրամադրել դրամական օգնություն .

   1) Մելքումյան Ռոբերտ Ռուշանի - 20000 դրամ
   2) Մադոյան Սեդա Նիկալի - 30000 դրամ
   3) Զաքարյան Արմենակ Հայկազի - 30000 դրամ

2. Թումանյանի քաղաքապետարանի զանձապահ Անգին Ծատինյանին լիազորել Ալավերդու ՏԳԲ –ից ստանալու հատկացված դրամական օգնությունը:

Կողմ( 6 ) Դեմ ( 0 ) Ձեռնպահ ( 0 )

ՄԻՍԱՔ ԱՂԱՄՅԱՆ

ՆԵՐՍԵՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

ՍԵՅՐԱՆ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

ՄԱՐԱՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՄԱՐՏՈՒՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ՌԱՄԱԶՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ՋԱՎԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Թումանյան համայնք, Կենտրոնական փողոց 1,
հեռ. 098-04-80-46

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«13» մարտի 2013 թվականի N 9

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ԿՈՅՈՒՂՈՒ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ <<ՀԱՅ ՋՐՄՈՒՂ ԿՈՅՈՒՂԻ>> ՓԲԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով <<Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի դրույթներով ՀՀ Լոռու մարզի Թումանյանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝

1. Թումանյան քաղաքի համայնքային սեփականություն հանդիսացող մատակարարվող խմելու ջրի ու կոյուղու 1086,8 հազար դրամ հաշվեկշռային արժողության համակարգերը մինչև 2035 թ. հուլիսի 1, ՀՀ Կառավարության կողմից հաստատված <<Անշարժ գույքի անհատույց օգտագործման>> պայմանագրով հանձնել <<Հ ա յ ջ ր մ ու ղ կ ո յ ու ղ ի>> փակ բաժնետիրական ընկերությանը:

2.Թումանյանի քաղաքային համայնքի ղեկավար՝ պարոն Լևոն Զավարյանին սահմանված կարգով ՀՀ Կառավարության և առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան սպասարկման գրասենյակում << Հ ա յ ջ ր մ ու ղ կ ու յ ու ղ ի>> ՓԲԸ գլխավոր տնօրենի հետ կնքել, սույն որոշման 1-ին կետում նշված պայմանագիրը կամ դրանց կնքման գործարքը իրականացնելու համար լիզորել իրավասու անձի:

Կողմ(6) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ՄԻՍԱՔ ԱՂԱՄՅԱՆ

ՆԵՐՍԵՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

ՍԵՅՐԱՆ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

ՄԱՐԱՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՄԱՐՏՈՒՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ՌԱՄԱԶՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

✉ ՀՀ Լոռու մարզ ք. Թումանյան,Կենտրոնական փողոց N 1
☎ 098-04-80-46

# ՈՐՈՇՈՒՄ

«13» մարտի 2013 թվականի N 9-Ն

## ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013Թ. ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐԻ ԵԿԱՄՏԱՅԻՆ /ՄՈՒՏՔԱՅԻՆ/ ԵՎ /ԵԼՔԱՅԻՆ / ԾԱԽՍԱՅԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 34 հոդվածի 1-ին կետով և հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2013թ. բյուջեում փոփոխություններ կատարելու մասին 13.03.2013թ. թիվ 7-Ն որոշումը.

1..Հաստատել համայնքի 2013թ. բյուջեի եկամուտների և ծախսերի եռամսյակային բաշխումը /հավելված թիվ 1,2/:

2.Հաստատել համայնքի ծախսերի նախահաշիվները՝ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման հոդվածների /հավելված 2, 4/:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ՋԱՎԱՐՅԱՆ